ապրանքային շուկայում գործել է 11 տնտեսվարող սուբյեկտներ, իսկ «Ծխախոտ առանց ֆիլտրի» ապրանքային շուկայում գործել են 5 տնտեսվարող սուբյեկտներ, 926 413.3 հազ. հատ իրացման ծավալով: «Ծխախոտ ֆիլտրով» ապրանքային շուկայում 2001 թվականի նկատմամբ 2002 թվականին իրացման ծավալը աճել է 57.3%, իսկ «Ծխախոտ առանց ֆիլտրի» ապրանքային շուկայում 2002 թվականին նվազել է 18.7%: Համակենտրոնացման աստիճանը բնութագրող բոլոր ցուցանիշներն էլ վկայում են այդ շուկաների համակենտրոնացման բարձր աստիճանի մասին (տե՛ս Աղյուսակ 1-ի տվյալները):

«Դիզելային վառելիք» ապրանքային շուկայում 2001 թվականին գործել են 39 տնտեսվարող սուբյեկտներ: «Էքսիմ Պետրոլ Գրուպ» ՍՊԸ-ի իրացման ծավալը կազմել է 38.1% և ունի գերիշխող դիրք: 3 խոշոր տնտեսվարող սուբյեկտների իրացման համատեղ բաժինը կազմել է 54.7%: 2005 թվականին գործել են 14 տնտեսվարող սուբյեկտներ: 2005 թվականին գերիշխող դիրք ունի «Ֆլեշ» ՍՊԸ, որի իրացման բաժինը կազմել է 42.8%, իսկ 2001-ին՝ կազմել էր 10.11%: 2005 թվականի 4 խոշոր տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը կազմել է 67.5%: 2006 թվականի առաջին կիսամյակում՝ գործել են 11 տնտեսվարող սուբյեկտներ: 2006 թվականի առաջին կիսամյակում նույնպես գերիշխող դիրք ունի «Ֆլեշ» ՍՊԸ-ն, որի իրացման բաժինը կազմում է 38.8%: 2006 թվականի առաջին կիսամյակում 4 խոշոր տնտեսվարող սուբյեկտների իրացման բաժինը կազմել է 91.1%: 2001 թվականի նկատմամբ 2005-ին իրացման ծավալն աճել է 20.3%: Շուկայի համակենտրոնացման աստիճանը ուսումնասիրվող ժամանակահատվածում շատ բարձր է:

Այսպիսով, դիտարկված ապրանքային շուկաներում համակենտրոնացման աստիճանը շատ բարձր է և այն աճման միտում ունի:

ԳԱԲՐԻԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ռուս-հայկական (սլավոնական)
պետական համալսարանի ասպիրանտ

ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

ԱՊՀ երկրների տնտեսությունը 21-րդ դարում զարգանում է կայուն և դինամիկ կերպով: Տնտեսական աճը նշանակալիորեն պայմանավորվել է արտաքին բարենպաստ գործոններով, արժութային-ֆինանսական շուկաների կայունացմամբ, տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումներով, ճյուղերի առաջանցիկ զարգացմամբ: Պետությունների մեծամասնությունում տնտեսության վրա դրական միավորի արժեզրկման ճնշումը եղել է վերահսկելի:

Տնտեսական զարգացման դրական դինամիկան ապահովող կարևոր գործոններից մեկը հակամենաշնորհային քաղաքականությունն է: Հակամենաշնորհային քաղաքականությունը էական նշանակություն ունի ԱՊՀ երկրների շուկայական տնտեսությունների ձևավորման և զարգացման գործում: Այն դրսևորվում է հակամենաշնորհային օրենսդրության միջոցով:

ԱՊՀ երկրներում հակամենաշնորհային քաղաքականությունը ձևավորվել է հիմնականում 20-րդ դարի 90-ական թվականներին, երբ ընդունվեցին այդ երկրների ազգային հակամենաշնորհային օրենսդրությունները և 1993թ. դեկտեմբերի 23-ին Աշգաբադում համագործակցության երկրների միջև ստորագրվեց «Համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականություն վարելու մասին» պայմանագիրը: Վերջինս նոր խմբագրմամբ թարմացվեց 2000թ., որը թույլ տվեց էապես հարստացնել հակամենաշնորհային քաղաքականության նորմատիվ-իրավական հիմքը:

Գործող օրենքի մեծաթիվ խմբագրումներից և լրացումներից հետո Ռուսաստանի Դաշնության Պետդուման 2006թ. հուլիսի 8-ին ընդունեց «Մրցակցության պաշտպանության մասին» օրենք[1], որով նորացվեցին ապրանքային (այդ թվում՝ ֆինանսական) շուկաներում մենաշնորհի գործունեության կանխարգելման և նախազգուշացման իրավական գործիքները: Մասնավորապես, ընդլայնվել են ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրք ունենալու պայմանները (տնտեսվարող սուբյեկտների համատեղ գերիշխման դրույթ է ներառվել և բացառություն է նախատեսվել մինչև 35% բաժին ունեցող սուբյեկտների նկատմամբ): Ընդլայնվել է ֆիրմաների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման ցանկը: Օրենքով սահմանվել են թույլատրվող համաձայնությունների տեսակները (հոդվ. 12 և 13):

Օրենքում ներառվել են նոր դրույթներ՝ կապված պետական և տեղական իշխանության մարմինների կողմից պետական օգնության թույլատրման և արգելման պահանջների հետ (հոդվ. 19-21): Ավելի է որոշակիացվել տնտեսվարող սուբյեկտի բաժինների (բաժնետոմսերի) ձեռքբերման նկատմամբ պետական վերահսկողությունը (հոդվ. 28):

Նոր դարի շեմին էապես փոփոխվել է Ուկրաինայի հակամենաշնորհային օրենսդրությունը: «Ձեռնարկատիրական գործունեության մեջ մենաշնորհի սահմանափակման և անբարեխիղճ մրցակցության արգելման մասին» օրենքի փոխարեն 2002թ. փետրվարից ուժի մեջ մտավ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը[2]: Նոր օրենքով հստակեցվել և ընդլայնվել է տնտեսական համաձեռնություններին ներկայացվող պահանջները (նախկին օրենքի 5-րդ հոդվածի փոխարեն նոր օրենքի 5-11 հոդվածներում ներառվել են նոր դրույթներ): Ընդլայնվել է հակամրցակցային համաձայնությունների ցանկը: Մուծվել է համաձայնություններին վերաբերող թույլտվություն ստանալու պրակտիկա: Մրցակցային օրենսդրության պահպանման առումով հստակեցվել է իշխանության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացվող պահանջները: Նախատեսվել են նոր դրույթներ օրենսդրության խախտման փաստի քննարկման վերաբերյալ

[1] Федеральный закон N 135-ФЗ "О защите конкуренции", Российская газета, N 162, 27.07.2006
[2] Закон Украины "О защите экономической конкуренции", 11.01.2001, N 2210-III

(հոդվ.35-49), մասնավորապես, ամրագրվել է խուզարկելու և փաստաթղթեր առգրավելու իրավասություն: Հստակեցվել և ավելի խստացվել են մրցակցային օրենսդրության խախտման համար պատասխանատվությունը:

Էական փոփոխություններ են կատարվել նաև Ղազախստանի Հանրապետության մրցակցային օրենսդրությունում: Որոշակիորեն փոխվել է հակամենաշնորհային մարմնի կարգավիճակը: Եթե հին օրենքով («Մրցակցության զարգացման և մենաշնորհ գործունեության սահմանափակման մասին») հակամենաշնորհային մարմինը հանրապետության նախագահի տնօրինման ներքո էր և հաշվետու էր գերագույն խորհրդին, ապա նոր օրենքով[1] («Մրցակցության և մենաշնորհ գործունեության սահմանափակման մասին») հակամենաշնորհային մարմնի կանոնադրությունը և իրավասությունները հաստատում է կառավարությունը: Նոր օրենքում եվրոպական երկրների օրինակով ներառվել է շուկայում համատեղ գերիշխման դրույթը: Հստակեցված և համալրված են տնտեսական համաձայնությունների և համակենտրոնացումների նկատմամբ ներկայացվող պահանջները: Կանոնակարգված են նման երևույթների դեպքում կարգավորող մարմնի և տնտեսվարող սուբյեկտների հարաբերությունների ընթացակարգերը:

Հստակեցված են նաև հակամենաշնորհային օրենսդրության պահպանման ուղղությամբ իշխանության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ ներկայացվող պահանջները: Խստացված են հակամենաշնորհային օրենսդրության խախտման համար նախատեսված պատժամիջոցները:

Որոշակի փոփոխություններ են կատարվել նաև Ադրբեջանի Հանրապետության հակամենաշնորհային օրենսդրությունում: Նախ, Ադրբեջանի Հանրապետության նախագահի 2006թ. դեկտեմբերի 28-ի «Ադրբեջանի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության գործունեության կատարելագործման միջոցառումների մասին» հրամանագրով հակամենաշնորհային քաղաքականության դեպարտամենտը վերակառուցվեց Տնտեսական զարգացման նախարարությանն առընթեր պետական հակամենաշնորհային ծառայության: Նախագահի նույն օրվա մեկ այլ հրամանագրով հաստատվեց Պետական հակամենաշնորհային ծառայության կանոնադրությունը, որով այդ ծառայությանը առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, կենտրոնական և տեղական գործադիր մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների, մրցակցային, գովազդային և բնական մենաշնորհների օրենսդրությունների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող պետական գործադիր մարմնի կարգավիճակ շնորհվեց: Ներկայումս, Ադրբեջանի Հանրապետության պառլամենտում առաջին ընթերցմամբ ընդունվել է «Մրցակցության օրենսգիրք», որում գործող օրենքի համեմատ էական փոփոխություններ են նախատեսված:

Մոլդովայի Հանրապետությունում ներկայումս գործում է 2000թ. ընդունված «Մրցակցության պաշտպանության մասին օրենքը», որը 2005թ. վերջին լրամշակվեց: Դրա համաձայն, էկոնոմիկայի և առևտրի նախարարության գործառույթներից հանվեց հակամենաշնորհային կարգավորման գործառույթը՝ Պառլամենտի կողմից ձևավորվող կարգավորող նոր մարմին ամրագրելու նպատակով: Չնայած 2006թ. տարեկան բյուջեում նախատեսված էր այդ նպատակով ծախսային հոդված, սակայն Պառլամենտը «Մրցակցության պաշտպանության ազգային գործակալությունը» ձևավորեց միայն 16.02.2007թ. N 21-XVI որոշմամբ:

Հայաստանի Ազգային ժողովի կողմից 2006թ. նոյեմբերի 6-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումով հիմք դրվեց հակամենաշնորհային քաղաքականության իրականացմանը:

Օրենքը կարգավորում է մրցակցային դաշտը չորս ուղղություններով՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների որոշակի գործողություններ, տնտեսվարող սուբյեկտների միջև որոշակի համաձայնություններ և համակենտրոնացումներ, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Օրենքի վեցամյա գործնական կիրառումից հետո դրանում կատարվեցին էական փոփոխություններ[2]: Մասնավորապես, համալրվեցին հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների ցանկերը, համատեղ գերիշխման դրույթներ ամրագրվեցին, հստակեցվեց տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման դրույթը, տարբերակված չափանիշներ մտցվեցին հայտարարագրման ենթակա ուղղահայաց և հորիզոնական համակենտրոնացումների նկատմամբ, կարգավորման դաշտ տեղափոխվեց տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվող պետական օժանդակությունը:

2006թ. հուլիսին Տաջիկստանի Պառլամենտը ընդունեց «Ապրանքային շուկաներում մրցակցության և մենաշնորհ գործունեության սահմանափակման» օրենքի նոր խմբագրությունը՝ հաշվի առնելով հատկապես Ռուսաստանի Դաշնության փորձը:

Ուզբեկստանում փոփոխություն է մտցվել «Ապրանքային շուկաներում մրցակցության և մենաշնորհ գործունեության սահմանափակման մասին» օրենքում՝ կապված սուբյեկտների ֆինանսական պատասխանատվություն ազատականացման հետ:

Բելառուսի Հանրապետությունում մրցակցային քաղաքականության փոփոխություն չի եղել: Կարգավորման մեջ տիրապետողը վարչական լծակներն են:

Այսպիսով, ԱՊՀ երկրները 21-րդ դարի շեմին, ընդհանուր առմամբ, միմյանց համահունչ են դարձրել իրենց հակամենաշնորհային քաղաքականությունը և հստակեցրել են մրցակցային օրենսդրությունը:

---

[1] Закон Республики Казахстан " О конкуренции и ограничении монополистической деятельности", 19.01.2001г., N 144-I I ЗРК

[2] «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, Պաշտոնական տեղեկագիր N 18, 2007թ.